ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՎԵՃԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

idcarmenia@gmail.com
http://www.foi.am/hy/IDC/

**ք. Երևան**
**19.11.2012**

# ԿԱՐԾԻՔ

**Բլոգգեր Տիգրան Քոչարյանի և «Կողմնակի անձանց Մ» ՍՊԸ-ի («Չորրորդ ինքնիշխանություն» օրաթերթ) միջև դատական վեճի կապակցությամբ**

## 1. ԳՈՐԾԻ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

Ներկայումս Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում ընթացքի մեջ է բլոգգեր Տիգրան Քոչարյանի հայցադիմումի հիման վրա հարուցված քաղաքացիական գործն ընդդեմ «Չորրորդ ինքնիշխանություն» օրաթերթի: Հայցվորը խնդրում է դատարանին սահմանել, որ օրաթերթի հուլիսի 13-ի համարում հրապարակված «Ֆաշիստն ու փիղը. ի պաշտպանություն փղերի» հոդվածով խախտվել է իր պատվի և արժանապատվության իրավունքը, ինչպես նաև պարտավորեցնել պատասխանողին վճարել 3 մլն դրամ որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում վիրավորանքի ու զրպարտության դիմաց, պարտավորեցնել պատասխանողին հրապարակել հերքում և խնդրել ներողություն: Ներկայումս դատաքննությունը նախապատրաստական փուլում է, որի ընթացքում կողմերը ճշգրտում են քննության շրջանակները, մասնավորապես, թե որ արտահայտություններն են հայցվորի կողմից դիտվում որպես վիրավորանք և որոնք՝ զրպարտություն:

Վեճի առիթը հոդվածի բովանդակությունն է իր ամբողջության մեջ, որի մի հատվածը նշում է հետևյալը.

> *«Հայտնի իմաստով ֆալոսի վրա քաշված ռեզինն էլ ֆալոսի ֆորման է ստանում ու նրա գործառույթները ստանձնում զուգահեռաբար: Հայտնի իմաստով այն, այդ ռեզինը, «իզդելիյե նոմեռ դվա»-ն որոշակիորեն*

*ավտոնում գործառույթներ ունի ինքն էլ, որով և նպաստում է ֆալոսի գործունեությանը: Ասենք կան նրա վրա այսպես մանր-մանր-մանր ուռուցիկություններ, կամ այսպես բարակ-բարակ-բարակ մազիկներ, կամ էլ ասենք ինքն այսպես երկարա-տանձա-կնճիթաձև է... Ներողություն: Մի խոսքով սեքսոպաթոլոգին դիմեք, կամ սեքսոլոգին, կամ ֆալոպրոթեզավորողին ու ֆալոիմիտատոր բանեցնողներին՝ իրենք կմանրամասնեն կոնդոմ-ֆալոս տանդեմի նյուանսները.... Շեղվեցի: Կնճիթ-աձև է: Կնճիթ: Փիղ: Փիղ: Կնճիթ: Կասեք էլի փղին եկանք: Կասեք էլի ՓՂԻՆ ես դարձել: Փղից, կասեք, ի՞նչ ես ուզում»:*

Սույն գործում առկա է մի խնդրահարույց հանգամանք, որի առումով **Խորհուրդը ցանկանում է հանդես գալ առաջարկությամբ:**

Դատաքննությանը զուգահեռ կողմերը շարունակում են ԶԼՄ-ների տարբեր միջոցներով և տարբեր հարթակներից հանդես գալ փոխադարձ մեղադրանքներով, որի ընթացքում բանավեճի առարկա է դառնում վիճահարույց հոդվածի բովանդակությունը: Պատասխանող լրատվամիջոցն ընթերցողներին պարբերաբար ներկայացնում է դատաքննության ժամանակ կողմերի փաստաբանների հարց ու պատասխանը՝ իր սեփական մեկնաբանություններով, իսկ հայցվորը հանդես է գալիս հայտարարություններով այն մասին, որ վիճահարույց հոդվածով և դրանում օգտագործված արտահայտություններով պատասխանող լրատվամիջոցը հենց իրեն է նկատի ունեցել: Մինչդեռ սրանք հարցեր են, որոնք ընկած են դատաքննության հիմքում և կազմում են սույն գործով դատական ճանաչողության առարկա: Հաշվի առնելով, որ վիճահարույց հոդվածը հանրային հատուկ հետաքրքրություն ներկայացնող որևէ խնդիր չի բարձրացնում, այլ դրանում շարադրված են զուտ անձնական բնույթի մտքեր ու նկատառումներ (թեկուզ դա արված է չափազանցված լեզվամտածողությամբ), տվյալ դատաքննության վերաբերյալ տեղեկատվություն ստանալու հանրային շահը բացակայում է: Նման պայմաններում նպատակահարմար կլինի, եթե կողմերը խնդրո առարկա վեճին ավելորդ հանրայնություն չտան և փորձեն վեճի լուծումը սահմանափակել դատարանի դահլիճով, այլ ոչ թե հանրային միջավայրով: Կրկին, խնդիրն էապես տարբեր կլիներ, եթե վիճահարույց հոդվածը վերաբերեր հանրային հետաքրքրություն ներկայացնող խնդրի: Այդ դեպքում լրատվամիջոցների միջոցով դատական քննության մասին տեղեկատվություն ստանալը՝ դատական քննությանը զուգահեռ, կլիներ հանրային շահի տիրույթում:

Հաշվի առնելով վերը նշվածը, **Խորհուրդը ցանկանում է** դիմել կողմերին, որպեսզի մինչև դատաքննության ավարտը ձեռնպահ մնան հոդվածի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելուց: **Խորհուրդը սա առաջարկում է** որպես բարի կամքի դրսևորում՝ հաշվի առնելով հոդվածի առանձնահատուկ բնույթը, դրանով բարձրացված խնդրում հանրային շահի բացակայությունը և այն բացասական ազդեցությունը, որ կողմերի միջև հանրային միջավայրում ընթացող փոխադարձ մեղադրանքները կարող են ունենալ դատարանի կողմից կանխակալ կարծիքի ձևավորման վրա:

Հաշվի առնելով, որ դատաքննությունը դեռ ընթացքի մեջ է, գործով դատական ակտ դեռ չի կայացվել, ինչպես նաև, որ դատական գործի մասին քննարկումները դատարանի դահլիճից դուրս զարգանում են լարված մթնոլորտում, **Խորհուրդն առայժմ ձեռնպահ է մնում** վեճի առարկայի մասին կարծիք հայտնելուց:

***Տեղեկատվական վեճերի խորհուրդ***

**Շուշան Դոյդոյան (Խորհրդի քարտուղար) -** Տեղեկատվության ազատության կենտրոնի նախագահ

**Մանանա Ասլամազյան** -«Լրատվության այլընտրանքային ռեսուրսներ» ծրագրի տնօրեն

**Բորիս Նավասարդյան** – Երևանի մամուլի ակումբի նախագահ

**Արամ Աբրահամյան** - «Առավոտ» օրաթերթի գլխավոր խմբագիր

**Արա Ղազարյան** - «Արևի Քնսալթ» փաստաբանական գրասենյակի փոխտնօրեն